

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆԸ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
- 1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
- 1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
- 1.4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
- 1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
- 1.7. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԶՈՒՐ
- 1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ
- 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ
- 1.12. ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
- 1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
- 1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- 1.15. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
- 1.16. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- 1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
- 1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
- 2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- 2.2. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
- 3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՐԿ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
- 3.5. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
- 3.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ` ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ
4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է քառամյա ժամկետում համայնքի համալիր զարգացմանն ուղղված ռազմավարական ուղեցույց փաստաթուղթ:

Քառամյա ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ – տնտեսական համալիր իրավիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ: Այն նախատեսում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և բյուջետավորման նպատակային գործընթացի իրականացումը: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն կարող է հաշվի առնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության և սահմանամերձ բնակավայրերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ուժեղ և թույլ կողմերը, դասակարգվել են առաջնային և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, վերլուծվել են համայնքի ֆինանսական, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորությունները: Առաջադրվել են ծրագրային աշխատանքներ, որոնցում տրվել են առկա հիմնախնդիրների նկարագրությունները, լուծման ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները, ֆինանսավորման աղբյուրները, ակնկալվող արդյունքները, իրականացվելիք ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումները, ինչպես նաև կատարման ժամկետներն ու պատասխանատուները: Կատարվել են սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են համայնքի ներկա իրավիճակը բնութագրող վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում կախված արտաքին ու ներքին գործոնների ազդեցությունից կարող են ենթարկվել փոփոխությունների ու լրացումների:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Զրառատ գյուղը հիմնադրվել է 1828 թվականին, գտնվում է նախկին Ախուրյանի շրջանի հարավ - արևելքում, Գյուլնեյ / Արևոտ / , Գալանդայա / Հարսնասար / սարերի ստորոտում, այն համարվում է լեռնային - ծայրամասային գյուղ, որը գտնվում է Զրառատ գետի վերին հոսանքի ավազանում, ծովի մակերևույթից 1900-2000 մ բարձրության վրա, մայրաքաղաքից 140 կմ, իսկ մարզկենտրոնից՝ 20 կմ հեռավորության վրա, վարչական տարածքը կազմում է 39.16 քառ.կմ: Մինչև 1945 թ. դեկտեմբերի 7-ը գյուղը կոչվել է Չրախլի, շրջակայքում պահպանվել են գյուղատեղի և կիկլոպյան ամրոցի մնացորդներ, մատուռ: Գյուղի հյուսիս – արևելքում գտնվում են Սուրբ Մինաս եկեղեցու 7-րդ դարի ավերակները:

1820-1827 թթ հիմնադրված գյուղի բնակչության կազմը հիմնականում Կարսից, Էրզրումից / Կարինից /, Բուլանըխից, Խնուսից, Մանազկերտից գաղթածներն են:

1952թ -ին Չրախլի են տեղափոխվում հարևան Խանվալի գյուղի բնակիչները, որոնք Սուշից տեղահանվածներն են:

Համայնքում նախկինում զարգացած է եղել անասնապահությունը: Խորհրդային կարգերի փլուզումից հետո այդ արտադրությունը անկում ապրեց: Այժմ գյուղում զարգացում է ապրում մանր եղջերավոր անասնապահությունը և կաթնարտադրությունը: Գյուղացիները իրենց հիմնական եկամուտները ստանում են անասնապահությունից և հողագործությունից: Հողագործությունը չի համարվում եկամտի մեծ աղբյուր, քանի որ չկան ջրովի հողատարածություններ, հնարավորություն չկա կատարել ցանքաշրջանառություն, իսկ բերքատվությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Համայնքում բացակայում է ոռոգման համակարգը:

2008թ համայնքում իրականացվել է հողերի մշակման սուբսիդավորման ծրագիրը, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ծրագրով ձեռք է բերվել որոշ գյուղատնտեսական տեխնիկա և գյուղագործիքներ, որոնք բարձրացրել են հողերի մշակման արդյունավետությունը:

Մթերքների իրացման շուկան գտնվում է գյուղից հեռու, ուստի հիմնականում մթերքների իրացումը կատարվում է գյուղ եկող գնորդների միջոցով:

Գյուղը երբևիցե փախստականների չի ունեցել և այժմ էլ չունի, սակայն մեծ է երիտասարդության արտագաղթը դեպի ԱՊՀ երկրներ: Սա կապված է գյուղի սոցիալական ծանր պայմաններից և աշխատատեղերի բացակայությունից:

Համայնքը բոլոր ժամանակներում մեծ կարևորություն է տվել սերունդների կրթության և դաստիարակության հարցերին: Ջրառատի միջնակարգ դպրոցը ունեցել է բարի ավանդույթներ և ուսման բարձր առաջադիմություն:

Յուրանքանչյուր տարի, դպրոցի տասնյակ շրջանավարտներ տեղ են զբաղեցրել հանրապետության հեղինակավոր պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Սակայն բնակչության ներկայիս սոցիալական վատ պայմանների պատճառով, քչերին է հաջողվում իրենց շնորհալի ու տաղանդաշատ երեխաներին բարձրագույն կամ մասնագիտական կրթության տալ:

Ջրառատը ակտիվ մասնակցություն է ունեցել ինչպես Հայրենական Մեծ պատերազմին, այնպես էլ Արցախյան ազատամարտին:

Հայրենական Մեծ պատերազմում գյուղը տվել է 97 զոհ:

Արցախյան ազատամարտի մասնակիցներ են համայնքի 5 կամավորականներ, Արցախի համար նշված մարտերում և սահմանների պաշտպանության ժամանակ գյուղը տվել է 1 զոհ:

## ***1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՀՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ՌԵԼԻԵՖԸ***

Ջրառատ գյուղը գտնվում է Ջրառատ գետի վերին հոսանքի ավազանում:

Կլիման բարեխառն է, որը աչքի է ընկնում զով ամառներով և խիստ ցուրտ ձմեռներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 5, 2 – 6, 4 աստիճան: Բացարձակ նվազագույնը  $-30^{\circ}\text{C}$ , իսկ առավելագույնը՝  $+34^{\circ}\text{C}$ : Համայնքի տարածքում տարեկան տեղումների քանակը կազմում է 450-550 մմ:

Ռելիեֆը հիմնականում ներկայացված է թույլ թեք հարթություններով և բլրա-թմբային խորդուբորդություններով: Այն ծովի մակերևույթից բարձր է 1950 մ:

Հողագիտական ուսումնասիրության ընթացքում տնտեսության տարածքում առանձնացվել են 2 հողատիպ՝ լեռնային սևահողեր և լեռնամարգագետնատափաստանային հողեր: Համայնքի տարածքում գերակշռում են լեռնային սևահողերը:

Հողատարածքները մշտապես վտանգված են կարկտահարությամբ և տևական երաշտով: Տարածքը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում: Համայնքի վարչական տարածքը կազմում է 5622.18 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր 5288.07 հա, այդ թվում 1328.74 հա վարելահող, 3330.04 հա արոտ, 523.97 հա խոտհարք և այլ -105.32 հա հողատեսքեր:

Բնակելի շինությունների տակ -119.49 հա , արդյունաբերական արտադրական շինությունների տակ – 21.87 հա , ճանապարհների տակ – 23.54 հա , առողջապահական , հանգստավայրերի , մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր – 97.65 հա , ջրային ֆոնդի հողերը կազմում են 0.98 հա : Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 15 կմ, մարզկենտրոնից 20 կմ և մայրաքաղաքից՝ 140 կմ հեռավորության վրա: Համայնքը կապված է Ջրառատ- Բասեն – Կառնուտ – Ախուրյան – Գյումրի հանրապետական նշանակության ասֆալտապատ ճանապարհով :

### **1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտնի պատմական տեղեկությունների համաձայն 1820-1827 թթ հիմնադրված գյուղի բնակչության կազմը հիմնականում Կարսից , Էրզրումից / Կարինից / , Բուլանըխից , Խնուսից , Մանազկերտից գաղթածներն են :

1952թ -ին Չրախլի են տեղափոխվում հարևան Խանվալի գյուղի բնակիչները , որոնք Մուշից տեղահանվածներն են :

Վերջին 10 տարիներին համայնքի բնակչության թիվը նվազել է մոտ 60 մարդով, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների թիվը նվազել 20 տոկոսով և արձանագրվել է բնակչության կազմի ծերացում: Ներկայումս համայնքի աշխատունակ բնակչության 50-60 տոկոսը մեկնում են արտագնա սեզոնային աշխատանքի, շարունակվում է հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

#### ***ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ (մարդ)***

***(Տվյալները լրացված են 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ)***

- Ընդամենը՝ մշտական բնակչություն - 1216,  
Այդ թվում՝ տղամարդ -615 , կին՝ - 601,
- Տնային տնտեսությունների թվաքանակը – 285,
- Առկա բնակչություն – 1214,
- Առկա տնային տնտեսությունների քանակը – 268,

#### ***Բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելության (առկա բնակչություն)***

- Հայ – 1214,
- Ռուս – 2,

***Բնակչության բաշխումն ըստ տարիքային խմբերի (առկա բնակչություն)***

Նախադարոցական տարիքի երեխաներ / 0 – 6 տարեկան / - 80

որից՝ մինչև 1 տարեկան – 10,

1-2 տարեկան – 27,

3-4 տարեկան – 26,

5-6 տարեկան – 27:

- Դարոցական տարիքի երեխաներ / 7 – 17տարեկան / - 130,

որից՝ 7-10 տարեկան – 52,

11-14 տարեկան – 45,

15-17 տարեկան – 33:

- Հասուն տարիքի բնակչություն / 18-62 / - 902,

որից՝ 18-22 տարեկան – 93,

23-45 տարեկան – 491,

46-62 տարեկան – 318:

- Տարեց բնակչություն / 63 և ավելի / - 104:

- Համայնքի ընտրողների թիվը - 834:

***Ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն (վերջին 3 տարիների միջին ցուցանիշ)***

- Ծնունդ - 12,

Որից կենդանի ծնունդ – 12,

- Մահ – 6,

- Ամուսնություն – 9,

- Ամուսնալուծություն – 0 :

***Համայնքի սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Հաշմանդամներ – 15,

այդ թվում կանայք՝ 7,

որից՝ հաշմանդամ երեխա – ,

- Միակողմանի ծնողազուրկ երեխա - 0,

- Ամուսնալուծված անձի երեխա – 1,

- Կենսաթոշակառուներ – 124,

- Միայնակ չաշխատող կենսաթոշակառուներ – 9,

- Տարեց կենսաթոշակառուներ /75 տարեկան և բարձր/ - 49,

***Համայնքի տնային տնտեսությունների սոցիալական խմբերի ներկայացվածությունը***

- Երեք և ավելի երեխաներ ունեցող /0-18 տարեկան/ – 21,
- Միայն կենսաթոշակառուներից կազմված /63 և ավելի տարեկան/ - 7,
- Հաշմանդամ երեխա ունեցող – ,
- Մինչև 6 տարեկան երեխա ունեցող – 55,
- Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 24:

***ՋԲԱԴՎԱԾՈՒԹՅՈՒՆ***

***Համայնքի բնակչության բաշխումն ըստ զբաղվածության հիմնական ճյուղերի (մարդ)***

- Գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 836,
- Վարձու աշխատանք գյուղատնտեսական ոլորտում – 0,
- Վարձու աշխատանք ոչ գյուղատնտեսական ոլորտում, մասնավոր – 40,
- Վարձու աշխատանք պետական ոլորտում – 34,
- Ոչ գյուղատնտեսական ինքնազբաղվածություն – 2,
- Աշակետներ /16 տարեկան և բարձր/ - 16,
- Ուսանողներ – 28,
- Բանակում ծառայողներ – 19,  
որից պայմանագրային՝ 4,  
պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող՝ 15,
- Չունեն զբաղվածություն /տնտեսապես ոչ ակտիվ/ – 39,

***Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների***

- Գյուղատնտեսություն – 760,
- Հանքագործական արդյունաբերություն – ,
- Էլեկտրոէներգիայի, գազի ջրամատակարարման ոլորտի սպասարկում – 3,
- Շինարարություն – 25,
- Առևտուր և այլ սպասարկումներ – 2,
- Գյուղատնտեսական ծառայություններ – 30,
- Տրանսպորտ և կապ – ,
- Տեղական ինքնակառավարում – 8,
- Կրթություն – 23,
- Առողջապահություն և սոցիալական ծառայություններ –2,



- Կոմունալ, անհատական ծառայությունների մատուցում – ,
- Ոսանողներ, ավարտական դասարանների աշակերտներ, բանակում ծառայողներ - 63:

***Միգրացիա /2016 թվականի ընթացքում/***

- Այլ բնակավայր տեղափոխված ընտանիքների թիվը --, որից` Հայաստանում այլ բնակավայր` -:
- Արտերկիր` 0:
- Մշտական բնակության համար համայնք տեղափոխված ընտանիքների թիվը` 10 որից Հայաստանի այլ բնակավայրերից` 2:
- Արտա-նա աշխատանքի մեկնողների թիվ – 205 (146 տնային տնտեսություններից):

***Համայնքի հասուն տարիքի բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի***

- Տարրական – 17,
- հիմնական – 133,
- միջնակարգ -645,
- միջնակարգ մասնագիտական – 200,
- բարձրագույն - 53:

**1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և հանայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի /ավագանու 5 անդամ/ և համայնքի ղեկավար: 2016 թ. Հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքներով համայնքի ղեկավար է վերընտրվել Ահարոն Ոսկանյանը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով`

**Հայեցողական պաշտոն**

Համայնքի ղեկավարի տեղակալ:

**Համայնքային ծառայության պաշտոններ`**

1. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար – 1 միավոր,
2. գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ – միավոր,

**Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ**

1. Համակարգչի օպերատոր – 1 միավոր,

2. Գրադարանավար – 1 միավոր,
3. Հավաքարար - 1 միավոր,
4. Հարկային գործակալ- 1 միավոր ,

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ**

N	Անուն, ազանուն	Ծննդյան թիվը	Կրթությունը	Կուսակցական պատկանելությունը
1.	Վոլոդյա Հովհաննիսյան	1954թ	Միջին . մասնագիտական	անկուս
2.	Արթուր Մանուկյան	1968թ	Միջին . մասնագիտական	ՀՀԿ
3.	Ռուզաննա Ոսկանյան	1963թ	Միջին . մասնագիտական	ՀՀԿ
4.	Գևորգ Յայլոյան	1955թ	Միջին . մասնագիտական	ՀՀԿ
5.	Հովհաննես Խաչատրյան	1991թ	բարձրագույն	ԲՀԿ

Համայնքապետարանն ունի վարչական շենք, շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի նորացված է, Համայնքապետարանը հազեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 25-որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՈՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԱԾԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐԸ**

N	Պաշտոնի անվանումը	Հաստի-քային միավորը	Պաշտոնյին դրույքաչափը	Ազգանուն, անուն	Ծննդյան թիվը	Կրթությունը
<i>Քաղաքական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավար	1	300000	Ոսկանյան Ահարոն	1956թ.	բարձրագույն
<i>Հայեցողական պաշտոն</i>						
1.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	105000	Յայլոյան Գևորգ	1955	Միջին մասնագիտական
<i>Համայնքային ծառայության պաշտոններ</i>						
1.	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	165000	Հովհաննես Պետրոսյան	1964	բարձրագույն
2.						
3.	Առաջատար մասնագետ-հաշվապահ /3.2-1/	1	160000	Կարինե Մարգարյան	1991թ	բարձրագույն
4.						

<i>Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ</i>						
1.	Համակարգչի օպերատոր	1	145000	Կարեն Ոսկանյան	1986թ	բարձրագույն
2.	Գրադարանավար	1	73000	Սուսաննա Նիկողոսյան	1948թ	Միջին . մասնագիտական
3.	Հավաքարար	1	73000	Վարդուհի Ոսկանյան	1963թ	Միջին. մասնագիտական
4.	Հարկային գործակալ	1	115000	Մանյա Կարապետյան	1960թ	Միջին մասնագիտական
<i>Աշխատակազմի աշխատակիցների քանակը</i>		8 (ութ )				

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն համայնքում կազմավորվել և գործում են հետևյալ մշտական հանձնաժողովները՝

- Վարչական հարցերի հանձնաժողով,
- Անչափահասների հարցերի հանձնաժողով,
- Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողով,
- Կանանց և երեխաների հարցերի հանձնաժողով,
- արտակարգ իրավիճակներից հետո ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողով,

## **1.5. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

### *1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ*

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մանկապարտեզի, որը կառուցման օրվանից մինչև օրս հիմնանորոգման չի ենթարկվել:

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1970 - ական թվականներին: Այն ունի 10-12 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով և 280 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցը վերանորոգվել է , կառուցվել է նոր 150 տոննա տարողությամբ ՕԿՋ և 4000 գծ/ մ երկարությամբ նոր ջրագիծ / Շաբոյի , Բանդի Օսկանի ջրաղբյուրների գլխամասային կառույցները , որի շնորհիվ համայնքի ջրի մատակարարումը ավելացել է մոտ 5 լ/վ –ով: Վերանորոգման և բաշխման կարիք

ունի գյուղի ներտնտեսային ցանցի մի մասը , որը նախատեսվում է կառուցել 2017 թվականի ԻՖԱԴԻ ծրագրի 2-րդ փուլով և համայնքի համաֆինանսավորմամբ :

Համայնքը ոռոգման համակարգը չունի :

Ճանապարհը գտնվում է բարեկարգ վիճակում :

Ղաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 50 կմ: Նրա առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ:

Բնակավայրում գործում է փոստային բաժանմունք

**ՑԱՆԿ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ**  
**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ**

N	Գույքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը / դրամ/	Հաշվեկշռ ա-յին ընդհանուր արժեքը /դրամ/	Գույքի տեխնիկական վիճակի նկարագրությունը
1.	Գյուղապետարանի վարչական շենք	1975	1	Գնահատված չէ	0.0	Օգտագործվում է
2.	Մանկապարտեզի շենք	1970	1	Գնահատված չէ	0.0	Հիմնական վերանորոգման կարիք ունի
3.	Գյուղամիջյան խճուղիներ		20	Գնահատված չէ	0.0	Վերանորոգման կարիք ունի
4.	Զրագիծ	1975	4710	Գնահատված չէ	0.0	բավարար
5.	Զրնուղի ցանց	1975	25	Գնահատված չէ	0.0	բավարար
6.	Գերեզմանատուն	1961	5 հա	Գնահատված չէ	0.0	բավարար
7.	Հացահ. պահեստ	1989	1	264369	264369	Օգտագործվում է
8.	Ավտոմեքենա ԳԱԶ-3110	1998	1	1500000	1500000	Օգտագործվում է
9.	Համակարգիչ (կոմպլեկտ)	2004	1	131500	131500	Օգտագործվում է
10.	Անավարտ օբյեկտներ		4	Գնահատված չէ	0.0	Քայքայված , քանդված
11.	Բաղնիսի շենք		2	Գնահատված չէ	0.0	Քայքայված , քանդված

				ված չէ		
12.	Համակարգչի սեղան (1177)	2004	1	35000	35000	Օգտագործվում է
13.	Գրապահարան	2008	2	66667	66667	Օգտագործվում է
14.	Գրասեղան	2008	1	22000	22000	Օգտագործվում է
15.	Օֆիսի սեղան	2008	1	41667	41667	Օգտագործվում է
16.	Աթոռներ	2008	6	58333	58333	Օգտագործվում է
17.	Աթոռներ	2008	2	16667	16667	Օգտագործվում է
18.	Օֆիսի աթոռ	2008	1	45833	45833	Օգտագործվում է
19.	Օֆիսի աթոռ	2008	1	20833	20833	Օգտագործվում է
20.	Տպիչ լազերային	2008	1	54000	54000	Օգտագործվում է
21.	Համակարգիչ կոմպլեկտ , UPS 1	2009	1	380000	380000	Օգտագործվում է
22.	Monitor LG 20.42	2012	1	90000	90000	Օգտագործվում է
23.	CPU G550	2012	1	270000	270000	Օգտագործվում է
24.	Խմելու ջրագիծ	2012	1	7052942	7052942	Օգտագործվում է
25.	Համակարգիչների կոմպլեկտ / Intel G550, Asrok H61 , RAM 2GB, DDR3, HDD 500GB, wi-fi card case invader, keybord , mause	2013	2	522840	522840	Օգտագործվում է
26.	Օֆիսային սեղան	2015	1	250000	250000	Օգտագործվում է
27.	Օֆիսային սեղան	2015	1	120000	120000	Օգտագործվում է
28.	Օֆիսային աթոռ	2015	1	155000	155000	Օգտագործվում է
29.	Օֆիսային աթոռ	2015	4	280000	280000	Օգտագործվում է
30.	Աթոռ	2015	20	500000	500000	Օգտագործվում է
31.	սեղան	2015	1	350000	350000	Օգտագործվում է
32.	Փափուկ կահույք	2015	1	405000	350000	Օգտագործվում է
33.	Պահարան	2015	2	240000	350000	Օգտագործվում է
34.	Օֆիսային սեղան	2015	3	180000	350000	Օգտագործվում է
35.	Պահարան	2015	2	160000	350000	Օգտագործվում է
36.	Պահարան	2015	1	140000	350000	Օգտագործվում է
37.	Պահարան	2015	1	220000	350000	Օգտագործվում է

## 1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնակավայրը կոյուղացված չէ: Բնակավայրում կանոնակարգված աղբահանություն չի իրականացվում: Կենցաղային աղբը համայնքից հեռացվում է տնային տնտեսությունների և գյուղապետարանի կողմից կազմակերպվող սանիտարական մաքրման օրերի միջոցով:

Բնակավայրը չունի համայնքային նշանակության հանգստի գոտի: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի փոշոտվածությունը: Բնակավայրում վտանգավոր արտանետումներ չկան:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորությունը :

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը:

## **1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

Համայնքի մասնավոր տների քանակը 241 հատ է , տարածքը կազմում է 60610 քառ/մ :

## **1.8. ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈՂՄԱՆ ՋՈՒՐ**

Բնակավայրի խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1970 - ական թվականներին: Այն ունի 10-12 կմ երկարություն: Ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով և 280 տոննա տարողության օրական կարգավորման ջրամբարների միջոցով: Ցանցը վերանորոգվել է , կառուցվել է նոր 150 տոննա տարողությամբ ՕԿՋ և 4000 գծ/ մ երկարությամբ նոր ջրագիծ / Շաբոյի , Բանդի Օսկանի ջրաղբյուրների գլխամասային կառույցները , որի շնորհիվ համայնքի ջրի մատակարարումը ավելացել է մոտ 5 լ/վ –ով: Վերանորոգման և բաշխման կարիք ունի գյուղի ներտնտեսային ցանցի մի մասը , որը նախատեսվում է կառուցել 2017 թվականի ԻՖԱԴԻ ծրագրի 2-րդ փուլով և համայնքի համաֆինանսավորմամբ:

Համայնքը ոռոգման համակարգը չունի

## **1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ**

Ջրառատը միջհամայնքային ճանապարհներով կապված է հարևան համայնքների հետ, իսկ ներհամայնքային ճանապարհային ցանցը կազմում է 25 կմ, համայնքի կենտրոնական` ասֆալտապատ փողոցը` 1300 մետր երկարությամբ ունի գիշերային լուսավորություն:

Դաշտամիջյան ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 50 կմ: Նրա առանձին տեղամասերի քայքայվածության պատճառով այն գյուղատնտեսական տեխնիկայի համար դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակ:

Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապն ապահովվում է ավտոբուսի երթուղիների միջոցով: Սեկ ուղևորի փոխադրավարձը կազմում է 200 դրամ:

Մայրաքաղաքի և հարևան համայնքների հետ կապն ապահովվում է Գյումրի-Երևան երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների միջոցով:

Բնակավայրում գործում է փոստային բաժանմունք:

Համայնքում առկա է բնակիչների սեփականությունը հանդիսացող 70 մարդատար ավտոմեքենա:

Բնակավայրը ապահովված է «ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ», «ՕՐԱՆՏ», «ԲԻԼԱՅՆ» բջջային և «Արմենտելի» կողմից սպասարկվող ֆիքսված հեռախոսակապով: Ֆիքսված հեռախոսակապով են ապահովված համայնքի մոտ 35 տնտեսություններ:

Բնակավայրն ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ: Թույլ է ինտերնետային կապը:

## 1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է:

Բնակչությունը սերտ կապեր ունի մայրաքաղաքի, մարզկենտրոնի, նախկին շրջկենտրոնի և շրջակա բոլոր համայնքների հետ:

Համայնքը համագործակցում է ինչպես հանրապետությունում գործող քաղաքական և հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Համայնքն անդամակցում է «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը, համագործակցության կապեր ունի «Ախուրյանի միջհամայնքային միավորման», «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ծրագրի, «Հայաստան համահայկական հիմնադրամի», «Համայնքների զարգացման հիմնադրամի», «Գյուղական բարեփոխումների աջակցության ծրագրի», ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի, «Շիրակ հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ի, ԻՖԱԴ-ի, ՇԵՆ ԲՀԿ-ի, Շիրակի մարզային զբաղվածության կենտրոնի և ներդրումային այլ կազմակերպությունների ու հիմնադրամների հետ:

Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի Առաջնորդարանի հետ:

## 1.11. ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5622.18 հա, որից`

1. գյուղատնտեսական նշանակության հողեր – 5288.07 հա, այդ թվում`

- վարելահողեր – 1328.74 հա,

այդ թվում՝

սեփականաշնորհված – 1197.19 հա,

համայնքային սեփականության – 114.88 հա,

- արոտներ – 3330.04 հա.
- այլ հողատեսքեր – 105.32 հա:

Վարելահողերի մեկ հեկտարից ստացվող զուտ եկամտի կադաստրային միջին գնահատականը կազմում է 9800 դրամ, իսկ տնամերձինը՝ 10700 դրամ:

Սեփականաշնորհված վարելահողերի մեկ հողբաժնի չափը կազմում է 2.3 հա.

2. Բնակավայրի հողեր – 209.62 հա.

3. Արդյունաբերական, արտադրական նշանակության հողեր 21.87 հա.

4. Ջրային ֆոնդի հողեր – 0.98 հա.

5. Հատուկ նշանակության հողեր – 97.65 հա.

### **1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի, բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն և այլն/ և հակակարկտային կայանքների բացակայության պատճառով համայնքի գյուղացիական տնտեսությունները լուրջ դժվարությունների առաջ են կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու և բարձր բերքատվություն ապահովելու համար:

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է բնակլիմայական պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով, ցրտահարությամբ և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 14-15 ցենտներ, իսկ երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%: Բուսաբուծության զարգացմանը մեծապես խոչընդոտում է ոռոգման համակարգի բացակայությունը:

Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 1933 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 779 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 3173 գլուխ, խոզեր 39 գլուխ: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև թռչնաբուծությամբ /հավեր՝ 1850 թև/ և մեղվապահությամբ /21 մեղվաընտանիք/:

Անասնապահության բնագավառում վերջին 10 տարիներին համայնքում արձանագրվել է մսի և կաթի արտադրության ծավալների ավելացում:



Վերջին տարիներին Ջրառատ բնակավայրում «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվել է արոտների ջրաբխացման ծրագիրը և ձեռք է բերվել նաև նոր գյուղատնտեսական տեխնիկա: 2016 թվականին համայնքի վարչական տարածքում կառուցվել է հովվի տուն և փարախ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

**1. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը**

Հողատեսքի անվանումը	2016թվական	
	Քանակը /հա/	Որից օգտագործվում է /հա/
Ընդամենը գյուղատնտեսական նշանակության հողեր, որից`	5288.07	5288.07
Վարելահող	1334.07	1334.07
Բազմամյա տնկարկներ	0.0	0.0
Խոտհարքներ	523.97	523.97
Արոտավայրեր	3324.71	3324.71
Այլ գյուղատնտեսական հողեր	105.32	105.32

**2. Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը**

	Ցանկատարածությունների կառուցվածքը	2016 թվական		% -ը վարելահողերի ընդհանուր քանակի նկատմամբ /1334.07հա/
		Քանակը /հա/	Մեկ հեկտարից ստացվող միջին բերքը /բերքատվություն/ տոննա	
<b>1.</b>	<b>Ընդամենը հացահատիկային մշակաբույսեր, այդ թվում`</b>	<b>914</b>	<b>1.7</b>	<b>68.5</b>
	Ցորեն	395	1.7	29
	Գարի	206	1.7	15.4
	Այլ հացահատիկային մշակաբույսեր	313	1.7	23.4
<b>2.</b>	<b>Ընդամենը կերային մշակաբույսեր, այդ թվում`</b>	<b>50.0</b>	<b>1.1</b>	<b>2.9</b>
	Կորնզան	27.0	1.1	2.0
	Առվույտ	23.0	1.1	1.7
<b>3.</b>	<b>Ընդամենը բանջարաբոստանային մշակաբույսեր, այդ թվում`</b>	<b>16.0</b>	<b>13.5</b>	<b>1.1</b>
	Կարտոֆիլ	9.0	12	X
	Կաղամբ	4.0	15.	X
	Գազար	0.0	0.0	X

	Բոստանայինայլ մշակաբույսեր	3.0	15	X
4.	Այլ / միամյա խոտ /	354.07	3	26.5
5.	Չմշակվող վարելահողեր			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1334.07</b>	<b>X</b>	<b>X</b>

**3. Հիմնական մշակաբույսերի միջին համախառն բերքը /բերքատվություն/**

Մշակաբույսի տեսակը	2016 թվական
<b>Հացահատիկ</b>	
Ցանկատարածքը /հա/	914
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	1.7
<b>Կերային մշակաբույսեր</b>	
Ցանկատարածքը	50.0
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	1.1
<b>Կարտոֆիլ</b>	
Ցանկատարածքը	9
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	12
<b>Կաղամբ</b>	
Ցանկատարածքը	4
1 հեկտարի միջին բերքատվությունը /տոննա/	15
<b>Բանջարանոցային այլ մշակաբույսեր</b>	
Ցանկատարածքը	3
1 հեկտարի միջին բերքատվությունը/տոննա/	15

**4. Անասնազլխաքանակը**

Գյուղատնտեսական կենդանիների տեսակները	/գլուխ/
	01.01.2016թ. հաշվառման տվյալներով
Խոշոր եղջերավոր անասուններ	1933
որից՝ կովեր	779
ոչխարներ և այծեր	3173
Խոզեր	39
թռչուններ	1850
մեղվաընտանիքներ	21

**5. Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը**

Անասնապահական մթերքի տեսակը	2016 թվական
<i>Մթերատվությունը</i>	
Մեկ պայմանական գլուխ խոշորի մթերատվությունը, տոննա	120
1 կովի կաթնատվությունը /լիտր/	1500
1 ոչխարի բրդատվությունը /կգ/	2.6
1 հավի ձվատվությունը /հատ/	150
1 մեղվաբնտանիքի մթերատվությունը /կգ/	10.0
<i>Արտադրության ծավալները</i>	
Մսի արտադրություն /տոննա/	26.8
Կաթի արտադրություն /տոննա/	680.0
Բրդի արտադրություն /տոննա/	0.9
Ձվի արտադրություն /հազ. հատ/	300.0
Մեղրի արտադրություն /տոննա/	1.6

**6. Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ**

Գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների անվանումը	Չափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	3
Անվավոր տրակտոր	հատ	11
Հացահատրկային կոմբայն	հատ	3
Խոտհնձիչ կոմբայն	հատ	3
Բեռնատար ավտոմեքենա	հատ	11
Տրակտորային կցասայլ	հատ	5
Գուրբան	հատ	6
Կուլտիվատոր	հատ	4
Շարքացան	հատ	5
Հակավորող մեքենա	հատ	5

--	--	--

**1.13. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ**

Ջրառատ համայնքում գործում են երկու առևտրի օբյեկտ : Համայնքում գործում է «Հարսնասար -2011 սպառողական կոոպերատիվ»-ը, որը համալրված լինելով որոշակի գյուղտեխնիկայով, մատուցում են գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ

**1.14. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Համայնքն ունի 250 աշակերտ/տեղով հանրակրթական մեկ դպրոց, որտեղ ներկայումս սովորում են 111 աշակերտներ:

Դպրոցը կառուցվել է 1978-1980 թվականներին :

Դպրոցն ունի 28 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ, որից 15-ը կանայք են:

Դպրոցի շենքը 1996 թվականներին վերանորոգվել է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով, իսկ պետական բյուջեի միջոցներով 2015 թվականին դպրոցում անցկացվել է ջեռուցման համակարգ: Դպրոցն հիմնականում ապահովված է անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և ուսումնա-մեթոդական նյութերով:

Ջրառատի հյուսիս–արևելքում է գտնվում Սուրբ Մինաս եկեղեցու 6-րդ դարի ավերակները, կան նաև ութ սրբատեղիներ, որոնցից երեքում պահպանվում է 18–րդ դարաշրջանի Ավետարաններ, պահպանվել են նաև Կիլկոայան ամրոցի մնացորդները և պալեոլիթի դարաշրջանի բնակատեղիներ: Համայնքում կա 1915 -1920 թթ, Եղեռնի զոհերի հուշարձան:

**Աշակերտների բաշխումն ըստ դասարանների**

N		Աշակերտների թիվը	Դպրոցում ընդգրկված աշակերտների թիվը ըստ տարիքային խմբերի	
1.	Դպրոցահեն նախակրթարան	25	3-6 տարեկան	
			Տղա	Աղջիկ
			12	13
	Տարրական	36	Մինչև 7 տարեկան	7 տարեկանից բարձր

2.	դպրոց /1-4-րդ դասարաններ/		Տղա	Աղջիկ	Տղա	Աղջիկ
			7	8	10	11
3.	Միջին դպրոց /5-9-րդ դասարաններ/	28	Տղա		Աղջիկ	
			14		14	
4.	Ավագ դպրոց /10-12-րդ դասարաններ/	22	Տղա		Աղջիկ	
			10		12	
	Ընդամենը	111				

Քայքայված և անբարեկարգ վիճակում է 70 տեղանոց մանկապարտեզի շենքը որը չի գործում: Համայնքը չունի մշակույթի տուն :

Համայնքը չունի հանգստի գոտի կամ այլ հարմարություններ՝ որտեղ հնարավոր կլինի կազմակերպել համայնքի բնակչության հանգստն ու ազատ ժամանցը, երեխաների մշակութային ու գեղագիտական դաստիարակությունը:

Դպրոցն ունի մարզադաշտ, որը վերանորոգման և կառուցապատման կարիք ունի:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումն իրականացվում է Ախուրյանի պոլիկլինիկական և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով, որտեղ աշխատում են 2 բուժքույր:

### 1.15. ՀԱՍՍԱՅՆՔԻ ՈՒՃԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- ՏԻՄ –երի նպատակային համակարգված և թափանցիկ գործունեությունը :
- Մարդկային և աշխատանքային ռեսուրսների առկայությունը :
- Համայնքի կողմից տնտեսական զարգացումների նոր օրինաչափությունների և առանձնահատկությունների ընդունումը , պատրաստակամությունը համայնքի զարգացման ռազմավարական ծրագրերին մասնակցություն ունենալը :
- Կրթական բարձր մակարդակ:
- Կոմունիկացիոն ցանցի առկայություն:
- Ազգաբնակչության կողմից ինտենսիվ գյուղատնտեսություն վարելու հմտություններ :
- Որպես համայնքի անդամ ի իր պարտականությունների գիտակցումը և կատարումը :
- Ավանդապահությունը :
- Հանցագործությունների աննախադեպ ցածր մակարդակ :
- Տրանսպորտի առկայություն
- Լրատվամիջոցների առկայությունը :

### 1.16. ՀԱՍՍԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Միջնակարգ դպրոցի կաթսայատան բացակայությունը

- Ոռոգման համակարգի բացակայությունը :
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները:
- Հակակարկտային կայանների բացակայությունը:
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:
- Գազբաշխիչ ցանցի բացակայությունը :
- Մշակույթի տան բացակայությունը:
  
- Մանկապարտեզի շենքի քայքայված վիճակը:
- Հանգստի գոտու բացակայությունը:
- Գործազրկության բարձր մակարդակը:
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

### **1.17. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Համայնքի բարենպաստ փոփոխությունների հնարավորությունները ամայնքի զարգացման հավանականության գնահատումն է՝ կախված դրանց վրա ազդեցություն ունեցող տարբեր գործոնների փոփոխությունից:

### **1.18. ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

- Ուժեղ սեյսմիկ գոտում գտնվելը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /երաշտ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ/:
- Հակակարկտային կայանքների բացակայությունը:
- Մշակույթի տան և մանկապարտեզի շենքերի բացակայությունը .
- Բնակչության ցածր կենսապայմանները.
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը համայնքից:

## **2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

### **2.1. Համայնքի ռազմավարությունն է՝**

- ✓ *Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:*
- ✓ *Զրառատի համայնքը դարձնել տարածաշրջանային գյուղատնտեսական զարգացած կենտրոն , հետևողական բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ- տնտեսական և կենցաղային պայմանները , համայնքը դարձնել բարեկարգ և գրավիչ :*
- ✓ *Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ*
- ✓ *Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը*
- ✓ *Մերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ*

**2.2. Համայնքի զարգացման 2016-2020թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են**

- Համայնքի սոցիալ- տնտեսական պայմանների բարելավում:
- Կրթական օջախների գործունեության կազմակերպումը:
- Համայնքի բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանությունը :
- Համայնքի կոմունալ – կենցաղային պայմանների բարելավում:
- Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- Բարելավել համայնքապետարանի շենքային և գույքային պայմանները
- Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ
- Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը

### **3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

#### **3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքհարկից և վարձակալության տրված համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Վերջին 10 տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 100 տոկոսով: Բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել են ընթացիկ աշխատավարձերի ու սոցիալական ապահովության պարտադիր վճարների վճարմանը, փոքրածավալ ծառայությունների մատուցմանը /աղբահանության կազմակերպում, փողոցների լուսավորության ցանցի վերականգնում, ցանցի սպասարկում և այլն/, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնությունների տրամադրմանը, և այլ ծրագրերի իրականացման համար համայնքից պահանջված ներդրումների կատարմանը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Համայնքի բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ծախսային ծրագրերին, որի համար համաֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքների օտարումից ստացվող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:



**3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Հազ. դրամ

Հ/հ	Եկամուտի տեսակը	2016թ. փաստացի կատարված	2017թ. նախատեսված	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում.
	Եկամուտներ, ընդհամենը	<b>29848,8</b>	<b>29818,4</b>	<b>30510,1</b>	<b>31219,1</b>	<b>31895,9</b>
Ա	Հարկային եկամուտներ	<b>3302.4</b>	<b>3329.5</b>	<b>3379.5</b>	<b>3429.5</b>	<b>3429.5</b>
1	Հողի հարկ	1929.5	1929.5	1929.5	1929.5	1929.5
2	Գույքահարկ	1372.9	1400.0	1450.0	1500.0	1500,0
Բ	Տուրքեր	<b>20,0</b>	<b>32.0</b>	<b>32.0</b>	<b>32.0</b>	<b>32.0</b>
1	Տեղական տուրքեր	20,0	32.0	32.0	32.0	32.0
Գ	Ոչ հարկային եկամուտ	<b>2680.0</b>	<b>2680.0</b>	<b>2680.0</b>	<b>2680.0</b>	<b>2680.0</b>
1	Հանայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստային գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճար	1700.0	1700.0	1700.0	1700.0	1700.0
2	Համայնքայի սեփ. հողերի վարձավճարներ	980.0	980.0	980.0	980.0	980.0
Դ	Տեղական վճարներ	<b>10.0</b>	<b>10.0</b>	<b>10.0</b>	<b>10.0</b>	<b>10.0</b>
Ե	Պաշտոնական տրանսֆերտներ, դոտացիա	<b>23141,0</b>	<b>23766.9</b>	<b>24408.6</b>	<b>25067.6</b>	<b>25744.4</b>
Զ	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	<b>695.4</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>
Է	Տարեսկզբի ազատ մնացորդ	11774,3	-	-	-	-
Ը	Ֆոնդային բյուջե	9506,6	-	-	-	-
	Բյուջեի կատարում/տոկոս/	100,0	100,0	100,0	100,0	100,0

**3.3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Չնայած տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարություն, երաշտ, ցրտահարություն/, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների, սեփական եկամուտների գծով համայնքում միշտ 100 տոկոսով ամեն տարի կատարվել է հարկային պարտավորությունները :

01.01.2016թ. դրությամբ համայնքը աշխատավարձի, սոցիալական ապահովության վճարների գծով ապառքներ չունի:

**3.4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Հազ. դրամ

Ապառքի տեսակը	Ապառքը առ. 01.01.16թ. դրությամբ	Ապառքների հավաքման կանխատեսում				Անհուսալի ապառքներ
		2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	
Հողի հարկ	-	-	-	-	-	-
Գույքահարկ	-	-	-	-	-	-
Հողի վարձավճար	-	-	-	-	-	-

**3.5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

N	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	Այդ թվում		Իրականացման տարեթիվը
				Դոնոր կազմակերպ.	Համայնքի ներդրում	
1.	Գյուղացիական տնտեսություններ ցանքատարածությունների սուբսիդավորման ծրագիր	Գյուղատնտեսության Նախարարություն	21,0 մլն դրամ	21,0 մլն դրամ	0,0	2008թ
2	Հասարակական վարձատրվող աշխատանք, միջհամայնքային փողոցների փոսալցում	Շիրակի մարզային զբաղվածության կենտրոն , համայնք	4,6 մլն դրամ	3,5 մլն դրամ	1,1 մլն դրամ	2008թ
3	Համայնքների տնտեսական զարգացում/ գյուղ . տեխնիկայի , գործիքների ձեռք բերում /	ԳՆ ԳԾԻԳ ՊՀ , համայնք	41,0 մլն դրամ	33,5 մլն դրամ	6,5 մլն դրամ	2008-2009թթ
4	Մնունդ աշխատանքի դիմաց	ՄԱԿ-ի գրասենյակ	1,5 մլն դրամ	1,5 մլն դրամ	0,0	2009 թ

5	Ճանապարհների կառուցում	Համաշխարհային բանկ	15 կմ	15 կմ	0,0	2010թ
6	Դպրոցի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	Պետ բյուջե	12,0 մլն դրամ	12,0 մլն դրամ	0,0	2011թ
7	Խմելու ջրի Ջրատարի և օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում	ՇԵՆ ԲՀԿ, Համայնք ,	70,0 մլն դրամ	68,5 մլն դրամ	1,5 մլն դրամ	2011թ.
8	ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի արոտների բարելավում	ՀՀ Գյուղ Նախ /ԳԲԱԾ/ և Համայնք	50,0 մլն դրամ	47,5 մլն դրամ	2,5 մլն դրամ	2012թ..
9	4 հա արոտների բարելավում	ՀՀ ԳՆ ԳԾԻԳ ՊՀ	4,0 մլն դրամ	4,0 մլն դրամ	0,0	2012թ
10	Գյուղապետարանի Վարչական շենքի վերանորոգում	Համայնք	4,0 մլն դրամ	0,0	4,0 մլն դրամ	2013թ
11	Համակարգչային սենյակի ստեղծում գյուղապետարանի վարչական շենքում	ՇԵՆ ԲՀԿ-Ի և Օրանժ Արմենիա ՓԲԸ , համայնք	2,5 մլն դրամ	2,0 մլն դրամ	0,5 մլն դրամ	2013թ
12	Գյուղտեխնիկայի /ինքնագնաց խոտհնձիչի ձեռքբերում	ԳՆ ԳԾԻԳ ՊՀ-Ի , ՀԵՅՖԵՐ համայնք	40,0մլն դրամ	32,0 մլն դրամ	8,0մլն դրամ	2014
13	Ջրառատ համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում	Համայնք	500,0 հազար դրամ	0,0	500,0 հազար դրամ	2014թ
14	Դպրոցի շենքի ոկլալ ջեռուցման անցկացում	ՀՀ Շիրակի մարզպետարան	14,0 մլն դրամ	14,0 մլն դրամ	0,0	2014թ
15.	Եղեռնի զոհերի 100 ամյակ կապակցությամբ հուշարձանի վերակառուցում բարեկարգում	Համայնք	4,0 մլն դրամ	0,0	4,0 մլն դրամ	2015թ
16	Գյուղապետարանի շենքի գույքավորում	Շիրակի մարզպետարան	3,0 մլն դրամ	3,0 մլն դրամ	0,0	2015թ
17	Խմելու ջրի ջրատարի և օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցում	ԻՖԱԴ , Համայնք	200,0 մլն դրամ	190,0մլն դրամ	10,0 մլն.դրամ	2016թթ
18	Հեռագնա արոտներում հովվի	ԳԾԻԳ ,	21,6 մլն	20,52 մլն	1,080 մլն	2016թ

	տան և փարախի կառուցում	համայնք	դրամ	դրամ	դրամ	
--	------------------------	---------	------	------	------	--

**3.6. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ**

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Դոնոր կազմակերպության ներդրում /հազ. դրամ/	Համայնքի ներդրում /հազ. դրամ/	Կատարման Ժամկետը /հազ. դրամ/
1.	<i>Ջրատառ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում</i>	50,0 մլն դրամ	ԻՖԱԴ 47,5 մլն դրամ	2,5 մլն դրամ	2017թ
2	<i>Ջրատառի համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում</i>	1,0 մլն դրամ	0.0	1,0 մլն դրամ	2017թ.
3	<i>Ջրատառի համայնքի դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում</i>	2,0 մլն դրամ	Բարերար 1,0 մլն դրամ	1,0 մլն դրամ	2017թ.
4	<i>Կանգառների վերանորոգում բարեկարգում</i>	1,0 մլն դրամ	0,0	1,0 մլն դրամ	2017 թ
5	<i>Ներհամայնքային փողոցների ձյան շերտի մաքրում</i>	1,0 մլն դրամ	0,0	1,0 մլն դրամ	2017թ
6	<i>Համայնքի կանաչապատ տարածքների ընդլայնում և պահպանում</i>	500,0 հազար դրամ	0,0	500,0 հազար դրամ	2017թ
7	<i>Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ</i>	2,0 մլն դրամ	Շիրակի մարզային զբաղվածության կենտրոն  1,5 մլն դրամ	500,0 հազար դրամ	2017թ

8	<i>Մանկապարտեզի շենքի հիմնական նորոգում</i>	60,0 մլն դրամ	Համայնքների զարգացման հիմնադրամ 57,6 մլն դրամ	2,4 մլն դրամ	2017-2018թթ
9	<i>Մանկապարտեզի շենքի գույքավորում</i>	20,0 մլն դրամ	Շիրակի մարզպետարան 19,0 մլն դրամ	1,0 մլն դրամ	2018թ
10	<i>ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի մշակույթի տան կառուցում</i>	100,0 մլն դրամ	Համայնքների զարգացման հիմնադրամ 96,0 մլն դրամ	4,0 մլն դրամ	2019թ
11	<i>Մշակույթի տան գույքավորում</i>	30,0 մլն դրամ	Շիրակի մարզպետարան 28,0 մլն դրամ	2,0 մլն դրամ	2019թ
12	<i>Համայնքի զագաֆիկացում</i>	50,0 մլն դրամ	ԻՖԱԴ 45,0 մլն դրամ	5,0 մլն դրամ	2020թ

#### 4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և նրանց առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և նամայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Իսկ ծրագրերի իրականացման, արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական հնարավորությունները, ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2016- 2020թթ. նախատեսվում է իրականացնել առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ ծրագրերը՝

#### Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 1

#### ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

**Ջրառատ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում**

## **ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ**

Համայնքի խմելու ջրի 70 տոկոսը մատակարարվում է <<Հարսնասար>> կոչվող հանդամասում գտնվող 5 ջրաղբյուրներից : Նոր կառուցած 150 տոննա ՕԿՋ-ից համայնք մտնող ջրատարը բաշխել համայնքի 30 տոկոս տնտեսությունների ներքին ցանցին:

### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է բնակչությանը մատակարարել շուրջօրյա խմելու ջուր :

### **ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ**

1 կմ երկարությամբ ջրատարի կառուցում , 500 մ ներքին ցանցի կառուցում :

### **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ուսումնասիրել խնդիրը և ներկայացնել ԻՖԱԴ-ին ֆինանսավորման խնդիրը լուծելու համար :

### **ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐԸ**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ԻՖԱԴի և համայնքի բյուջեի միջոցներով :

### **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագիրը կապահովի շուրջօրյա ջրամատակարարում, որը կբարձրացնի բնակչության սոցիալ-տնտեսական մակարդակը :

### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 50 մլն. դրամի ներդրում, ԻՖԱԴ 47.5 մլն դրամ , համայնք 2.5 մլն դրամ :

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017թվականին:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատ համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:

## Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

### ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում:*

### ՀԻՄՆԱԽՆՆՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շուրջ 20 տարի է ինչ լիարժեք չի գործում համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցը: Համայնքի բյուջեի միջոցներով անցած 3 տարիների ընթացքում հնարավոր է եղել տեղադրել 25 լուսարձակ, որը բավարար չէ համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժի անվտանգությունն ապահովելու համար: Բնակավայրի առանձին փողոցներում լուսարձակների բացակայության պատճառով խիստ դժվարացել է համայնքի բնակչության գիշերային ժամերի տեղաշարժը: Եղել են դեպքեր երբ համայնքի բնակիչները գիշերային ժամերին ենթարկվել է թափառող շների հարձակումներին:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման շնորհիվ ապահովել համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը:

### ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման տեխնիկական հնարավորությունները և կազմել լուսարձակների տեղաբաշխման սխեմա:
- Ըստ նախնական հաշվարկների բնակավայրի կենտրոնական և երկրորդական փողոցներում տեղադրել թվով 20 լուսարձակներ:
- Ըստ ամենայնի աջակցել լուսավորության ցանցի ընդլայնման շինարարական աշխատանքներին:
- Ապահովել ցանցի շահագործումն ու անխափան աշխատանքը:
- Ցանցի շահագործման ու սպասակարման հետ կապված ծախսերն իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

### ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնմամբ կապահովվի համայնքի բնակչության գիշերային ժամերի անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ըստ նախնական հաշվարկների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման և թվով 20 լուսարձակների տեղադրման անհրաժեշտ գումարը կֆինանսավորվի համայնքի բյուջեի միջոցներով:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017թ.:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:

### **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգում:*

#### **ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Ջրառատի համայնքի դաշտամիջյան ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար:

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է գուղատնտեսական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև համայնքի տրանսպորտային և հետիոտնի երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ:

Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար բեռնատարների և գյուղատնտեսական մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները և բերքի հնարավոր կորուստները:



## **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ծրարի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

## **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համայնքի տրանսպորտային երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի դաշտամիջյան ճանապարհահատվածները:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 2.0 դրամ ներդրում,  
Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջե 1.0 մլն դրամ և բարերարի միջոցներով:  
Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան :

**ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Համայնքում կանգառների վերանորոգում և բարեկարգում

**ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Կանգառները կառուցված է եղել 80-ական թվականներին և չի ենթարկվել վերանորոգման :

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Կանգառները ենթարկել ընթացիկ վերանորոգման և դարձնել բարեկարգ:Լ

**ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ուսումնասիրել կանգառների վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:
- Ծրագրի իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով :

**ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ**

Ծրագրով նախատեսվում է իրականացնել կանգառների վերանորոգումը: ֆինանսավորումը համայնքի բյուջեի միջոցների հաշվին :

**ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի իրականացմամբ կունենանք վերանորոգված և բարեկարգ կանգառներ :

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 1 մլն դրամի ներդրում, որը կֆինանսավորի համայնքը:

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Զրառատ համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:

### **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 5**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Զրառատի համայնքի ներհամայնքային ճանապարհների ձյան շերտի մաքրում*

#### **ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Քանի որ համայնքը լեռնային , ծմռան տեղումների քանակը շատ է , լինում են պարբերաբար քամին և ձնաբուք :

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է հեռացնել ձյունը , փողոցները դարձնել երթևեկելի :

#### **ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ**

Ծրագրով նախատեսվում է մաքրել ներհամայնքային ճանապարհները անհրաժեշտության դեպքում . օգտագործել համայնքին պատկանող տեխնիկան և ֆինանսավորումը կատարել համայնքի բյուջեից :

#### **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ճանապարհները դարձնել օգտագործելի և երթևեկելի :

#### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Զրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:

### **Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 6**

#### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Զրառատի համայնքի կանաչապատ տարածքների ընդլայնում և պահպանում :*

#### **ՀԻՄՆԱԽՆՆՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Համայնքը դարձնել կանաչապատ և բարեկարգ :

#### **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է կատարել լրացուցիչ ծառատունկ և կանաչապատում :

#### **ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ**

Ծրագրով նախատեսվում ընդլայնել կանաչապատ տարածքները , կատարել ծառատունկ և համայնքը դարձնել բարեկարգ :

Համայնքի բյուջեից կատարել ֆինանսավորում 500.0 հազար դրամ :

#### **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համայնքը դարձնել կանաչապատ և բարեկարգ :

#### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Զրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:

## Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 7

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման աշխատանքներ :*

### **ՀԻՄՆԱԽՆԴԻՆ ԼԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Ջրառատի համայնքի ներհամայնքային ճանապարհները գտնվում են քայքայված և անբարեկարգ վիճակում, առանձին տեղամասեր անանցանելի են հետիոտների, տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար:

### **ԾՐԱԳՐԻ ՆՊՍԱԿԸ**

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտնի երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ , ապահովել անվտանգ երթևեկություն, կանխել վթարային իրավիճակները :

### **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Ծրագրի իրականացման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծել աշխատանքային խումբ:
- Ուսումնասիրել նորոգման ենթակա ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները, կազմել թերությունների ակտ և աշխատանքների իրականացման ժամանակացույց :
- Ճանապարհների նորոգումը կատարել ինժեներական, և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ճանապարհների նորոգման, շրջակայքերի սանիտարական մաքրման աշխատանքներին ներգրավել համայնքում առկա տրանսպորտային, տեխնիկական միջոցներն ու համայնքի բնակչությանը:

### **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համայնքի տրանսպորտային երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի ներհամայնքային ճանապարհահատվածները:

### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 2.0 մլն դրամ ներդրում,  
Ծրագիրն իրականացնել համայնքի բյուջե՝ 500.0 հազար դրամ և Շիրակի մարզային զբաղվածության կենտրոն՝ 1.5 մլն դրամ :  
Ծրագրով նախատեսված օժանդակ աշխատանքների կատարումն իրականացնել համայնքի բնակչության ուժերով:

### **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել 2017 թվականին :

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան :

## **Ծ Ր Ա Գ Ր Ի Ր թիվ 8**

### **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի մանկապարտեզի շենքի հիմնական նորոգում*

### **ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1970- ական թվականներին և մինչ օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Մանկապարտեզի շենքը համայնքի նախադպրոցական երեխաների կրթման և դաստիարակության համար առաջնահերթություն է :

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ ներդրումային կազմակերպությունների աջակցությունը:

## **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Նորոգել մանկապարտեզի շենքը , այն դարձնել երեխաների համար հարմարավետ , պայմաններ ստեղծել համայնքի երեխաների դաստիարակման և կրթման համար :

## **ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- Մշակել և Համայնքների զարգացման հիմնադրամին ներկայացնել մանկապարտեզի շենքի հիմնական վերանորոգման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Պատվիրել մանկապարտեզի շենքի հիմնական վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և ապահովել համապատասխան տեխնիկական պայմաններ:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀԶՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 4 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

## **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մանկապարտեզի շենքի հիմնական նորոգման և շահագործման միջոցով հարմարավետ պայմաններ կստեղծի համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների կրթման և դաստիարակության համար:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել ՀԶՀ - ի և համայնքի ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 60 մլն. դրամի ներդրում, որի 4 տոկոսը՝ գումարով 2.4 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրը իրականացնել 2017-2018 թվականի ընթացքում:

**ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝**

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել մանկապարտեզի շենքի պահպանումը և շահագործումը :

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան :

**ԾՐԱԳԻՐ 9**

**ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Մանկապարտեզի շենքի գույքավորում**

**ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Շենքի կապիտալ վերանորոգումը ավարտելուց հետո , շահագործումը իրականացնելու նպատակով կատարել գույքավորում :

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է շահագործել մանկապարտեզի շենքը :

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Գույքավորումը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզպետարանի և համայնքի բյուջեի միջոցներով :

Շիրակի մարզպետարան 19.0 մլն դրամ , համայնք 1.0 մլն դրամ

Աշխատանքները ավարտել 2018 թվականին :

**ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագիրը կապահովի համայնքի բնակչության նախադպրոցական տարիքի երեխաների կրթությունը և դաստիարակությունը :

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատ համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան:



## Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 10

### ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

*ՀՀ Շիրակի մարզի Ջրատատի համայնքի մշակույթի տան կառուցում*

### ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Երկրաշարժից հետո համայնքը չունի մշակույթի տուն, որը հանդիսանում է համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օջախն է:

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կառուցել մշակույթի տուն , հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավադությունները:

### ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Համայնքների Ջարգացման Հիմնադրամին /ՀԶՀ / ներկայացնել մշակույթի տան կառուցման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Համայնքում ստեղծել աշխատանքային խումբ, պահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀԶՀ -ի ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 4 տոկոս ներդրումը:
- Ըստ ամենայնի աջակցել ծրագրի իրականացման աշխատանքներին:
- Ապահովել ծրագրի կենսունակությունը:

## **ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մշակույթի տան կառուցման միջոցով հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստիարակության համար:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել / ՀԶՀ / - ի ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 100.0 մլն. դրամի ներդրում, որի 4 տոկոսը՝ գումարով 4.0 մլն դրամ, պարտավորվում է ապահովելու համայնքը:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրը իրականացնել 2019 թվականի ընթացքում:

## **ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝**

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել մշակույթի տան պահպանումը և սպասարկումը:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրառատի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան :

## **Ծ Ր Ա Գ Ի Դ թիվ 11**

## **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի մշակույթի տան գույքավորում*

## **ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Մշակույթի տունը կառուցելուց հետո ապահովել անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել գույքի ձեռքբերումը : Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է Շիրակի մարզպետարանի , պետական մարմինների, ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

## **ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Մշակույթի տունը համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար: Վերականգնել համայնքի մշակութային նախկին ավադույթները:

## **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել

Շիրակի մարզպետարանի և համայնքի ֆինանսավորմամբ:

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 30.0 մլն. դրամի ներդրում, որի 2 մլն դրամ պարտավորվում է ապահովելու համայնքը:

## **ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրը իրականացնել 2019 թվականի ընթացքում:

## **ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ`**

Համայնքի բյուջեի միջոցներով ապահովել մշակույթի տան պահպանումը և սպասարկումը:

## **ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ`**

Ջրառատի համայնքի ղեկավար` Ահարոն Ոսկանյան

## **Ծ Ր Ա Գ Ր Ի Դ թիվ 12**

## **ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

*ՀՀ Շիրակի մարզի Ջրառատի համայնքի գազաֆիկացում*

## **ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Համայնքը գազաֆիկացված չէ , սահմանակից համայնքները նույնպես գազաֆիկացված չեն , համայնքը գազաֆիկացնելու համար անհրաժեշտ է կառուցել մոտ 10 կմ գազատար :

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Համայնքի բնակչության ապրելակերպը դարձնել բարեկեցիկ , բարձրացնելով կենսամակարդակը , որը նաև կնպաստի գյուղատնտեսության արդյունավետությանը :

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ծրագիրն իրականացնել ԻՖԱԴ-ի և համայնքի ֆինանսավորմամբ:

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Ծրագիրը իրականացնել 2020 թվականից :

**ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

Ջրատառի համայնքի ղեկավար՝ Ահարոն Ոսկանյան

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2016թ. փաստացի	2017թ. կանխատեսում	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	5622.18	5622.18	5622.18	5622.18	5622.18
2	Բնակչության թիվը	մարդ	1216	1220	1220	1222	1222
3	Տն. տնտնությունների թիվը	ընտ.	285	285	285	285	285
4	Ծնունդը	մարդ	12	16	16	18	18
5	Մահացությունը	մարդ	7	7	7	7	7
6	Աշխատունակ բնակչություն	մարդ	903	903	903	903	903
7	Գործազրկության մակարդակը	%	10	10	10	10	10
8	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	2	2	2	2	2
9	Համայնքային սնփականության վարելահողեր	հա	1328,74	1328.74	1328.74	1328.74	1328.74
10	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100	100	100	100	100
11	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայնությունը	կմ	7	7	7	7	7
12	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	20	20	20	20	20
13	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ/ ք.մ	241 / 60610	241 / 60610	241 / 60610	241 / 60610	241 / 60610
14	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	241 / 60610	241 / 60610	241 / 60610	241 / 60610	241 / 60610

15	<b>Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը</b>	լիտր/ օր	100	100	100	100	100
16	<b>Ջրի կորուստների ցանցում</b>	%	10	10	10	10	10
17	<b>Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում</b>	մարդ	111	111	111	111	111